ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/45

ք. Երևան «10» «05» 2022թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գ.Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ս.Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3. Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը:

2.1.4. Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5. Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը:

2.1.6. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8. Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2. Գնորդն պարտավոր է՝

2.2.1. Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2. Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5. կետով նախատեսված տույժը:

2.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5. Պայմանագրի 2.3.3. կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3. Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1. Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1. Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2. Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2. կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5. կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5. Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7. Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9. Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10. Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գինը կազմում է 42963900 (քառասուներկու միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2. Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2. Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4. Եթե պայմանագրի 5.3. կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2. Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 1.1. կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Գնորդի կողմից պայմանագրի 3.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում՝ կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011005130 ՀՎՀՀ 02698732	«Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ ք. Երևան, Տերյան 91 «Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ Հ/Հ 22055331129000 ՀՎՀՀ 01501418
Գլխավոր քարտուղար՝ _____ Գ. Սաֆարյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ _____ Ս.Հովհաննիսյան /ստորագրություն/ Կ.Տ

02698732

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО
"АРЕВИК"
"AREVIK"
PUBLISHING HOUSE"
01501418

Հավելված N 1
«10» 05 2022թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժինները	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը, ապրանքա-յին նշանը	Տեխնիկական բնութագիր	չափման միավորը	քանակը	միավորի գինը, ՀՀ դրամ	ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1.	22111110-54	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 1», 1-ին մաս /1-ին դասարանի դասագիրք-տետր/, հեղ. Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Առաջին դասարանի առաջին կիսամյակի համար նախատեսված է գիրք-տետր: Անհրաժեշտ է, որ դասագիրք-տետրումառաջադրանքներն ու հասկացությունները հստակ ձևակերպված լինեն: Դասագիրքը պետք է բաղկացած լինի նախաթվային բաժնից, որում կուսումնասիր-վեն այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են գույնը, ձևը, չափը, նյութը և 1-ից 10 թվերին վերաբերող բաժնից: Դասագիրքը պետք տրոհված լինի թեմաների, անհրաժեշտ է բովանդակության ցանկի առկայությունը: Դասագիրք-տետրն ուսանելուց հետո սովորողների մեջ պետք է ձևավորվեն այն գիտելիքները, կարողությունները, հմտությունները, որոնք պետք է հիմք դառնան հետագա ուսուցման համար: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները պետք է ներկայացվեն պարզից բարդ սկզբունքով: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքային առանձնահատկություններին, անհրաժեշտ են միջառարկայական կապերը: Պատկերազարդումները պետք է համադրված լինեն տեքստին՝ ներառելով սովորողի միջավայրին վերաբերող նյութեր: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդար՝ 60 x 84 x 1/8, 108 էջ, 4 + 4 գույն** **Տեխնիկական ցուցանիշները՝ թուղթ օֆսեթ, 80 գ** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**	հատ	1043	1420	1 481 060	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
2.	22111110-56	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 1» 2-րդ մաս /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Վ.Հովհաննիսյան, Վ.Սարգսյան, Ռ.Հովսեփյան** **Բովանդակային չափանիշներ**	հատ	728	1300	946 400	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

			Դասագրքում ուսումնասիրվում են երկրորդ տասնյակի թվերը՝ 10-ից մինչև 20, երեխաները պատկերացում են ստանում ընդհանրապես երկնիշ թվերի, դրանց կազմության, կլոր թվերի մասին: Նրանք խորացնում են իրենց ծանոթությունը տարբեր մեծություններին՝ երկարություն, ժամանակ, զանգված, տարողություն, և մի քանի կարևոր չափման միավորների՝ դեցիմետր (սանտիմետրին աշակերտներն արդեն ծանոթացել են առաջին կիսամյակում), ժամ, կիլոգրամ, լիտր: Բացի այդ՝ երեխաները յուրացնում են թվաբանական կարևորագույն գործողությունները՝ գումարումը և հանումը (20-ի սահմաններում), խնդիր, խնդրի պայման, խնդրի հարց (հարցադրում) առանցքային հասկացությունները, սովորում են լուծել, ինչպես նաև՝ կազմել պարզ խնդիրներ:Դասագրքում նույնպես մեծաթիվ են գունեղ, տպավորիչ պատկերազարդումները, երեխաներին առաջարկվում են ոչ քիչ թվով հետաքրքրաշարժ և կատակ խնդիրներ ու խաղ-խնդիրներ, երկրաչափական ուսանելի առաջադրանքներ: Հատուկ ուշադրություն է հատկացվել տրամաբանությունն ու ստեղծագործական երևակայությունը զարգացնող առաջադրանքներին, որոնք բավականին մեծաթիվ են ու բազմատեսակ:Բովանդակությունը տրոհված է դասերի, որոնցից յուրաքանչյուրը, որպես կանոն, սկսվում է նոր էջից: Դասն սկսվելիս առաջադրանքների համարակալումը նույնպես սկսվում է 1-ից ու առանձնացվում կարմիր գույնով: Առկա է բովանդակության ցանկ:Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին՝ ներառելով երեխայի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր ինչը սովորողների համար ավելի գրավիչ է դարձնում առարկայի ուսումնառությունը: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 116 էջ, 4 + 4 գույն** **Տեխն.ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինացվ.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**					
3.	22111110-65	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 2» /2-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան, Ս.Հարությունյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագրքի բովանդակությունը, որն իր մեջ ներառում է 2 հիմնական թեմաներ /«Երկնիշ թվեր» և «Եռանիշ թվեր»/ պետք է, համապատասխան լինի տվյալ առարկայի չափորոշչային պահանջներին և ծրագրին, ներառի ծրագրով սահմանված գիտելիքների ամբողջությունը:Պետք է համապատասխան լինի սովորողների անհատական և տարիքային զարգացման առանձնահատկություններին, պետք է	հատ	445	940	418300	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

			նպաստի առաջին դասարանում ձեռքբերած գիտելիքների ամրապնդմանը, հմտությունների զարգացմանը և սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի հատկացված ժամաքանակին: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորող-ների տարիքային առանձնահատկություններին, յուրացման հնարավորություն-ներին: Դասագրքի շարադրանքը պետք է լինի յուրացման համար մատչելի: Պատկերազարդումը պետք է ունենա գեղագիտական բարձր որակ և համապա-տասխանի սովորողների պատրաստվածության աստիճանին, ընկալման հնարա-վորություններին: Այն պետք է նպաստի սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 96 էջ, 4 + 4 գույն** **Տեխն.ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինացվ.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**					
4.	22111110-67	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 2» /2-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան, Ս.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը պետք է պարունակի մեկ խոշոր բաժին՝ «Բազմապատկում և բաժանում», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարո-ղությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխանի ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները պետք է ներկայացված լինեն պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները պետք է հնարավորություն ընձեռոեն կազմակերպել ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխանի սովորողների տարիք. առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին: Շարադրանքը պետք է լինի մատչելի, անհրաժեշտ է միջառարկայական կապերի ապահովվածությունը: Դասագրքում ներառված նյութերը պետք է սովորողներին տան հնարավորություն հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփա-կան վերաբերմունք դրանց նկատմամբ:Անհրաժեշտ է, որ բովանդակությունը տրոհված լինի թեմաների, և առկա լինի բովանդակությանցանկը:Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, պետք է համադրված լինեն տեքստին և մեկնաբանված:	հատ	445	940	418300	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

			Առաջադրանքներն ու պատկերազարդումները պետք է ներառեն սովորողի կյանքին ու միջավայրին վերաբերող նյութեր: Դասագիրքը պետք է ավարտվի «ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնությամբ»: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 116 էջ, 4 + 4 գույն** **Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**					
5.	22111110-94	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Անգլերեն 4» /4-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը պետք է բաղկացած լինի ներածական բաժնից, որտեղ զետեղված են 3-րդ դասարանի նյութը կրկնող վարժություններ, և 6 հիմնական բաժնից (Unit 1-6), որոնք, ըստ առարկայական ծրագրի, ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի առարկայի ուսուցմանը հատկացված ժամաքանակին: Յուրաքանչյուր բաժին պետք է ներառի քերականական նյութ, որը ներմուծվում է մոդելների, բանաձևերի ու աղյուսակների ձևով և ընգրկում անհրաժեշտ այն ծավալը, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին և բանավոր խոսքը, բառապաշարը զարգացնող առաջադրանքներ: Դասագիրքն ավարտվում է բառարանով՝ Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքին, յուրացմանը: Դասագրքի շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև միջառարկայական կապերով: Անհրաժեշտ են նաև ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը պետք է տրոհված լինի թեմաների, բովանդակության ցանկի առկայությունը պարտադիր է: Պատկերազարդումները պետք է լինեն նպատակային և տեքստին համապատասխան: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 108 էջ, 4 + 4 գույն** **Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**	հատ	22386	870	19475820	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**
6.	22111110-96	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Անգլերեն 4» /4-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի**	հատ	22386	870	19475820	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

			Բովանդակային չափանիշներ Դասագրքում պետք է զետեղված լինեն 4-րդ դասարանում ուսումնասիրվող մնացած 6 բաժինները, որոնք ըստ առարկայական ծրագրի՝ ներառում են այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը պետք է համապատասխան լինի առարկայի ուսուցմանը հատկացված ժամաքանակին: Յուրաքանչյուր բաժին պետք է ներառի քերականական նյութ, որը ներմուծվում է մոդելների, բանաձևերի ու աղյուսակների ձևով և ընգրկում անհրաժեշտ այն ծավալը, որը համապատասխանում է ծրագրային պահանջներին և բանավոր խոսքը, բառապաշարը զարգացնող առաջադրանքներ: Բովանդակության բարդության աստիճանը պետք է համապատասխան լինի սովորողների տարիքին, յուրացմանը: Դասագրքի շարադրանքը պետք է մատչելի լինի, ապահովված տեսական և գործնական նյութերի համամասնությամբ, ինչպես նաև միջառարկայական կապերով: Անհրաժեշտ են նաև ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ: Բովանդակությունը պետք է տրոհված լինի դասերի, է բովանդակության ցանկի առկայությունը պարտադիր է: Պատկերազարդումները պետք է լինեն նպատակային և տեքստին համապատասխան: Դասագիրք պետք է ավարտվի ուսումնասիրված նյութի կրկնությամբ: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 120 էջ, 4 + 4 գույն** **Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**					
7.	22111110-91	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4» /4-րդ դասարանի դասագիրք/, 1-ին մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան, Ս.Հարությունյան,Վ.Սարգսյան, Ս.Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքն սկսվում է նախորդ տարվա ուսումնասիրված թեմաների «Կրկնու-թյունից» և պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Գործողություններ բնական թվերի հետ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում	հատ	430	880	378400	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

			կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիք. առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը»,«Շախմատ» առարկաների հետ: Այսպես՝ դասագրքում առկա են խնդիրներ, որոնք առնչվում են երեխաներին ծանոթ հեքիաթների հետ, կան առաջադրանքներ, որոնք վերաբերում են կենդանական և բուսական աշխարհին, աշխարհագրական օբյեկտներին՝ լեռներին, տարբեր երկրներին, Հայաստանի քաղաքներին և այլն: Դրանով իսկ սովորողները հնարավորություն են ստանում հաղորդակցվելու համամարդկային մշակութային արժեքներին, ձևավորելու սեփական վերաբերմունք դրանց նկատմամբ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշներով: Քիչ չեն տարբեր բարդությամբ տրպմաբանական խնդիրները, որոնք կօգնեն զարգացնելու սովորողների համապատասխան կարողությունները: Բովանդակությունը տրոհված է թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին, ըստ անհրաժեշտության՝ առկա են համապատասխան մեկնաբանություններ: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝ 70 x 100 x 1/16, 128 էջ, 4 + 4 գույն** **Տեխն. ցուցանիշներ՝ թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝ 250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝ անջրաթափանց թղթով**					
8.	22111110-93	Դասագրքեր	**Գնման առարկա է հանդիսանում «Մաթեմատիկա 4» /4-րդ դասարանի դասագիրք/, 2-րդ մաս, հեղինակներ՝ Վ.Հովհաննիսյան,Ս.Հարությունյան, Վ.Սարգսյան, Ս,Սարգսյան** **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը պարունակում է մեկ խոշոր բաժին՝ «Կոտորակներ», որը, ըստ առարկայական ծրագրի, ներառում է այդտեղ շարադրված բոլոր թեմաները՝ նպաստելով առարկայի չափորոշչով սահմանված կարողությունների և հմտությունների, ինչպես նաև այդ չափորոշչով սահմանված արժեքային համակարգի ձևավորմանը: Նյութի ծավալը համապատասխանում է ուսումնական գործունեությանը հատկացված ժամաքանակին: Խնդիրներն ու վարժությունները ներկայացված են պարզից բարդ սկզբունքով, նյութերն ու առաջադրանքները հնարավորություն են ընձեռում կազմակերպելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքներ:Դասագիրքն ավարտվում է «Լրացուցիչ առաջադրանքներով» և ամբողջ տարվա ուսումնասիրված թեմաների	հատ	430	860	369800	**Մինչև ս/թ օգոստոսի 15-ը**

			«Կրկնությամբ»: Բովանդակության բարդության աստիճանը համապատասխանում է սովորողների տարիք. առանձնահատկություններին, յուրացման հնարավորություններին, շարադրանքը մատչելի է, ապահովված են տեսական և գործնական նյութերի համամասնությունը, նաև՝ միջառարկայական կապերը «Մայրենի», «Ես և շրջակա աշխարհը», «Շախմատ» առարկաների հետ: Առկա են ուսումնական տարբեր կարողությունների տեր սովորողների համար նախատեսված առաջադրանքներ, ամփոփիչ հարցեր: Դժվարավուն խնդիրները նշված են աստղանիշներով: Կան ոչ քիչ թվով տարբեր բարդությամբ տրամաբանական խնդիրներ: Բովանդակությունը տրոհված է թեմաների, առկա է բովանդակության ցանկ: Պատկերազարդումները՝ նկարները, գծանկարները, նպատակային են, համադրված են տեքստին: **Տեխնիկական չափանիշները** **Ստանդարտ՝** **70 x 100 x 1/16, 104 էջ, 4 + 4 գույն** **Տեխն. ցուցանիշներ՝** **թուղթ օֆսեթ, 70 գր,** **Կազմը՝** **250 գր, տպագր. 4 + 0 գույն, լամինաց.** **Փաթեթավորումը՝** **անջրաթափանց թղթով**					

1-8- րդ չափաբաժինների

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:
Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ «Վաճառքի ենթակա չէ» բառերը:
Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից բաշխման ցուցակի:
Դասագրքերը և դասագիրք–տետրերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ԳՆՈՐԴ

_____ Գ. Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Ս. Հովհաննիսյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաջորդական	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչություն	Տավուշի մարզպետարան կրթութ, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթութ. մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի Մարզպետար. կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Արագածոտնի մարզպետար. կրթության,մշակույթի և սպորտի վարչութ	Կոտայքի մարզպետար. կրթութ.մշակույթի և սպորտի վարչ.	Գեղարքունիքի մարզպետար.կրթության մշակույթի և սպորտի վարչութ	Արմավիրի մարզպետ.կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Արարատի մարզպ. կրթության,մշակույթի և սպորտի վարչութ	Վայոց_Ձորի մարզպետար. կրթության, մշակ. և սպորտ. վարչ.	Սյունիքի Մարզպետար. կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Ոչ պետակ. հանրակրթական ուսումնական հաստատություններ	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Մաթեմատիկա 1», 1-ին մաս (դասագիրք-տետր9	5	0	11	619	27	0	36	0	184	17	6	138	1043
2	Դասագիրք «Մաթեմատիկա 1» 2-րդ մաս	5	0	11	402	17	0	36	0	103	0	16	138	728
3	Դասագիրք «Մաթեմատիկա 2», 1-ին մաս	3	0	14	304	21	0	0	0	88	0	0	15	445
4	Դասագիրք «Մաթեմատիկա 2»,2-րդ մաս	3	0	14	304	21	0	0	0	88	0		15	445
5	Դասագիրք«Անգլերեն 4», 1-ին մաս	7326	739	1719	1842	1256	2296	1142	2512	1987	266	1084	217	22386
6	Դասագիրք «Անգլերեն 4», 2-րդ մաս	7326	739	1719	1842	1256	2296	1142	2512	1987	266	1084	217	22386
7	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 1-ին մաս	10	0	2	260	16	0	0	0	108	16	0	18	430
8	Դասագիրք «Մաթեմատիկա 4», 2-րդ մաս	10	0	2	260	16	0	0	0	108	16	0	18	430
ԸՆԴԱՄԵՆԸ		14688	1478	3492	5833	2630	4592	2356	5024	4653	581	2190	776	48293

Ծանոթություն* 1. Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերը թողնվում են ի պահ «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ում:
Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին դասագրքերով ապահովման նպատակով «Արևիկ» հրատարակչություն ՓԲԸ-ին կտրամադրվի բաշխման ցուցակ:
2. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հատկացվող դասագրքերի քանակի մեջ ներառված է ՀՀ ԿԳՄՄՆ ենթակայությամբ գործող հաստատություններին հասանելիք դասագրքերի քանակը:
3. ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին կտրամադրվեն բաշխման ցուցակներ՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների

ԳՆՈՐԴ

_____ Գ. Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

_____ Ս.Հովհաննիսյան

Հավելված N 2
«10» 05 2022թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-22/45 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականին ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110-54	Դասագիրք							1481060	1481060	1481060	1481060	1481060	1481060	1481060
2	22111110-56	Դասագիրք							946400	946400	946400	946400	946400	946400	946400
3	22111110-65	Դասագիրք							418300	418300	418300	418300	418300	418300	418300
4	22111110-67	Դասագիրք							418300	418300	418300	418300	418300	418300	418300
5	22111110-94	Դասագիրք							19475820	19475820	19475820	19475820	19475820	19475820	19475820

6	22111110-96	Դասագիրք							19475820	19475820	19475820	19475820	19475820	19475820	19475820
7	22111110-91	Դասագիրք							378400	378400	378400	378400	378400	378400	378400
8	22111110-93	Դասագիրք							369800	369800	369800	369800	369800	369800	369800
	ԸՆԴԱՄԵՆԸ								42963900	42963900	42963900	42963900	42963900	42963900	42963900

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

Գ.Սաֆարյան

ՎԱՃԱՌՈՂ

Ս.Հովհաննիսյան